

Թեան տուած սնաստիկ հարուածները :
 Սինսամբ սիրով և միաբանութեամբ ,
 սէր եւ միութիւն , ահա սքրա են
 ճշմարիտ լուսաւորութեան և յառա-
 ջադիմութեան խորհրդաւոր կնիք , և
 ազգաց բարոյական և նիւթական կեն-
 դանութեան բուն պայմանները : Վա-
 սըն զի եթէ ազգի մը յառաջադիմու-
 թեան համար կամք հարկաւոր է , ոչ
 ապաքէն կամքի ուղղութիւնն ալ ծը-
 նունդ է սիրոյ և միութեան : Առանց
 սիրոյ և միութեան բնաւ գործ մը յա-
 ռաջ չ'երթար : Սիրելի ազգայինք
 իմ , եթէ չունիք նիւթական զորու-
 թիւն , գոնէ ջանամք բարոյական գի-
 տութեան զորութիւնը մեր մէջ ար-
 մատացնել , և սիրել մտաւոր զար-
 գացման սերմերը , որ գերազանց է
 քան զառաջին . վասն զի բարոյա-
 կանութիւն և գիտութիւն ազգի մը
 կենսական տարերքն են : Ահա այսպէս
 ըրին Ս . Սահակ եւ Ս . Սեբրովը
 Հայաստանի հոգեւոր մշակութեան
 երկու ամուլքն . վասն զի մինչդեռ
 Հայաստանի քաղաքական շէնքը կը
 քայքայէր Յունական և Պարսկական
 ազդեցութեան , սքրա ամենայն
 ջանք 'ի գործ դրին բարոյական զը-
 րութիւնը արմատացնել Հայաստա-
 նի մէջ . և յաջողեցան ալ , վասն զի
 կամաց և աշխատութեան դէմ ամե-
 նայն ինչ կրնիճի , և վասն զի օրինա-
 ւոր ջանքն ու իղճը ամեն գժուարու-
 թեանց շղթաները կը խորտակեն եւ
 գործունէութեան բազուկները կրնան
 ամենայն հզոր պատուարներ կործա-
 նել : Վերջապէս կը կրկնեմ դարձեալ ,
 Թօթափենք մեր վրայէն տգիտութե-
 ծանր լուծը , գրկենք եռանդով եւ
 յօժարութեամբ սէրն և միութիւն ,
 վասն զի զորութիւնը միութեան մէջ
 է , զոր զգացին մեր նախնիք և դոր-
 ծաղբերլալ աւանդեցին մեզ մեր սյսօ-

րեաց գոյութիւնը , գոյութիւն ազգու-
 թեան և գոյութիւն ամենատարբ կը-
 բօնի . մէք եւս պարտաւոր եմք նոյն
 սիրով եւ նոյն միութեամբ գործել ,
 պահել ու զարգացնել նոցա սյստուր
 աւանդը , որպէս զի հարազատ որդի-
 ներ ըլլանք մեր Հայց :

Ա-Է-Գ-Ի-Կարապետեան
 Կ . Պօլեյցի .
 Աշ . Ժ . Կար . Վ . ար .

Գ Ի Տ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Ժամանակէ մի 'ի վեր տխուր իրո-
 զութիւն մի կը նշմարուի վեճակաւո-
 րաց կամ որ նոյն է առաջնորդաց ըն-
 թացից մէջ :

Կը տեսնուի , որ վարդապետ մի այս
 ինչ վեճակին առաջնորդ կը լինի և սա-
 կաւ ժամանակէն մի արագաթափը
 համբաւ կը տարածուի նորա մասին ,
 որ զայն 'իշտաւ Առաւորջի , Նեւ-
 սեսի , Սահակայ , Սեբրուպայ
 կը դասէ : Աւ ահա լրագրաց բազմու-
 թիւ նամակներ կը տեղան , նամակներ՝
 որոց իւրաքանչիւրն նոյն նոր առաջնոր-
 դի մէն մի բարեմասնութիւնքն 'ի
 հանդէս կածէ : Սին զայն կը գրուա-
 տէ իբրև ճշմարիտ սահմանադրական ,
 եկեղեցատէր և կրօնատէր . միւսն՝ որ-
 պէս քաջ և անձնագիր հովիւ . երրորդ
 մի՝ որպէս ուսումնասէր , դպրոցատէր
 և քաջ քարոզիչ . չորրորդ մի՝ որպէս
 ժողովրդատէր , արդարախոհ , իրա-
 ւընտիր , ինամոզ որբոց և այրեաց .
 հինգերորդ մի՝ որպէս պաշտպան հօ-
 ւսին ընդդէմ արիւնըռուչտ հարստա-
 հարչաց և վրկիչ իւր ժողովրդեան :
 Վերջապէս ինչ մի առ մի թուեմ , իբ-

րեւ սոցյս անխընդ հետեւութիւնն բազմատորագիր աղերսագիրներ կը տեղան 'ի պատրիարգարան և կը խնդրեն, որ զայն իրենց վիճակի վերայ եպիսկոպոս ձեռնադրել տայ իբրեւ վարձատրութիւն նորա անթուելի և անհամեմատելի բարեմանութեանց և քաջագործութեանց . յաւելլով միանգամայն թէ՛ եթէ իրենց խնդիրքն չը կատարուի , ժողովուրդն մեծապէս պիտի ցաւի :

Եւ այդ երբ այդ բազմադիմի ընտիր յատկութեամբք և առաքինութեամբ զորդարեալ առաջնորդն եպիսկոպոս լինի , կամ այն է որ այլ եւս բնաւ չը վերադառնար իւր վիճակն և Պօլսոյ մէջ , յստիւնս Վոսպորի , իրեն համար հանգիստ կարոնէ , կամ այն է որ , թէ և կը վերադառնայ , բայց գողցես գրխովին փոփոխուած . այլ եւս նորա համար սահմանադրութիւն , ժողովուրդ , առաքինութիւն , իրաւունք և պարտք բնաւ նշանակութիւն չունին , ըսկ օդահնչիւն բաւեր են . այլ եւս դպրոցներն նորա համար ստահակութեան բոյներ են , և հարստահարիչներն անիրաւութեան կշտամբիչներ : Աւհա՛ կը տեսնուի , որ սուղ ժամանակի մէջ այդ նորաստակ առաջնորդն փոխանակ ժողովրդի տառապանաց սիրովանք մատուցանելու , ինքն ամեն կերպով տառապանք կը լինի ժողովրդին , փոխանակ ժողովրդի հետ միանալով ներքին և արտաքին , բարոյական և նիւթական հարստահարչաց դէմ դիմագրաւելու , ինքն ժողովրդի դէմ կը զինի , նորա անդորութիւնն ու խաղաղութիւնն կը վերդովէ , նորա մէջ խռովութեան մահաբեր սերմեր կը սերմանէ , նորա եղբայրական և բրիտաննական միութիւնն կ'երկպառակէ և բազմադիմի կուսակցութիւններ իրարու դէմ կը

յարուցանէ , որով և բազմութիւ մի մեանց ներհակ նամակներ և ծակերագր-ի-ննէր կը հասնին մի զինի միայ թէ՛ 'ի Վոսպորագարան և թէ՛ 'ի գրասենեակս խմբագրաց , յորոց մի քանին մինչ յերկինս կը բարձրացնեն զայն ըստ առաջնոյն և մի քանին ևս մինչ 'ի դժոխս կ'իջուցանեն : Այսու Ազգային Վարչութիւն սոյն եպիսկոպոս կուսակցութեան մէջ ընդ երկար կը ծփայ , բննիչներ կը զրկէ ճշմարտութեան վերահասու լինելու համար և հուսկ ուրեմն 'ի Ա. Պօլսոյ կը հրաւիրէ նոյն նորապսակ առաջնորդն , որ այլ եւս չը կամիր անտի մեկնիլ , և եթէ ուրիշ թեմերէ իսկ 'ի պաշտօն առաջնորդութեան կոչուի , իբրեւ անձեռնհաս հրաժեշտ կը տայ , Պօլսոյ դատարիւսը ջուրթեմնէն չը զերուելու համար :

Ահա՛ այս է պատճառը , որ այժմ մեծամեծ թեմերու վիճակաւորք ըստ մեծի մասին նորոնձայ և երիտասարդ վարդապետներ են . իսկ , ընդ հակառակն , եպիսկոպոսուներ Ա. Պօլսոյ մէջ իբրեւ աբեղաներ քարոզչութեան պաշտօն կը կատարեն :

Այսու մեք չեմք կամիր ասել թէ՛ վարդապետներն առաջնորդութեան իրաւունք և արտօնութիւն չունին , կամ թէ միայն եպիսկոպոսաց կը սրտականի վիճակաւոր լինել , քաւ լիցի , այլ թէ՛ ի՛նչ է պատճառը , որ այդ եպիսկոպոսներն մինչդեռ վարդապետ են ամեն բանի ձեռնհաս կը լինին և ժողովրդի սիրան գրաւելու , որով և եպիսկոպոսական բարձր պաշտօնին հասնելու համար , բնաւ աշխատութիւն չեն խնայեր , սակայն երբ եպիսկոպոսանան այլ եւս առաջնորդութեան անձեռնհաս կը լինին և Ա. Պօլսէն չեն կամիր հեռանալ , և եթէ հեռանան իսկ վաղ ընդ փոյթ կը վերադառնան և անուղղակի պատրիար

քուժեան կը հետամտին : Չը գիտեմք, թէ արդեօք սատրխարքութիւնըն վիճակի մը առաջնորդ լինելէն հէշտ է, կամ թէ նուաղ ձեռնհասութեան կը կարօտի : Այս անդէն մերկասարանոց կ'երեւի, որ նոցա իրենց փարգապետութեան միջոցին ցոյց առած փոքր ինչ գործունէութեան խիական և ներքին նպատակն՝ Ազգի և Ակեղեցւոյ շինութիւնն ու ժողովրդի բարոյական և մտաւորական յառաջագիտութիւնն է : այլ մի միայն ժողովրդի պարզմտութիւնն շահասինդիր սգւով պատրելով եպիսկոպոսական բարձր կոչումն անարժանութեամբ յափշտակել և գիտակցութեայց նուիրական կոչումն արհամարհելու առնել :

Ահա այս կէտը մեր ազգային կրօնական և քաղաքական ժողովոց խորին ու շագրուութեան արժանի է իբրև մի ամենակարեւոր և կենսական խնդիր :

Ուրախ եմք, որ կրօնական ժողովն վանօրէից խորհուրդ մի կազմած է վանքերու վիճակներն հետազօտելու և բարւոքելու համար . բայց մեր սոյն առաջարկած խնդրոյ լուծումն ու բարւոքումն աւելի շահաւէտ և անհրոժեշտ է : Այն, վանօրէից վերայ հոգ տանելէն աւելի պէտք է եկեղեցականաց և կենդանի ժողովրդոց բարոյական վիճակին և կրթութեան հոգ տանիլ . վասն զի կրթութեամբ միայն կարող է մարդ անշահասէր, արդարասէր, ազգասէր և ժողովրդասէր լինել : Պէտք է եկեղեցականն ու աշխարհականն հայրական և որդիական սիրոյ ամուր և անլուծանելի կապերով իրարու հետ կապել, որով միայն հընարաւոր է Հայութիւնն, Հայատաննայց եկեղեցին և հայ լեզուն անմահ և անկորուստ պահպանել : Պէտք է հովուին և հօտին մէջ փոխադարձ


սէր, փոխահութիւն, պատիւ, յարգ և աջակից գործունէութիւն ու ազգաշինութիւն յառաջ ածել : Այլ երջանակն պէտք է ամրապնդել ժողովրդի յարաբերութիւնն՝ առաջնորդի հետ, և առաջնորդի յարաբերութիւնն՝ Ազգային Այլարչութեան հետ, որ մեր Հայաստաննայց առաքելական Ակեղեցւոյ սկզբանց յատկանիչն է . վասն զի մեր Ակեղեցին իւր ընդհանուր որդւոց սոյն սերտ միութեայ միայն կարողացած է դիմագրաւել յոգնաթիւ արհաւիրոց ու փոխորկաց, և մինչեւ ցարդ կանգուն և անսասան մնալ :

Սի այսպիսի խնդիր անտես առնել կը նշանակէ Հայութիւնն ջլատել, Ակեղեցւոյ հիմն խախտել և ամենաղեւտից պատճառ լինել : Սեբ այնպէս համոզուած եմք, որ եթէ վիճակաւորք աշխուրջ հսկողութեայ, խոհեմութեամբ և արթնութեամբ ժողովրդի միութիւնն ու խաղաղութիւն անխղով պահպանեն, ապականխ և ազգակործան կուսակցութեայց տեղի չըտան և իրենց հօտի հետ աջակից գործունէութեամբ աշխատին, այն ժամանակ մինչեւ ցարդ գործուած սոսկալի հարբտահարութեանց և ոչ մին տեղի կունենայ . և եթէ ունենայ խակ, կարող է տեղւոյն ժողովուրդն իւր առաջնորդի աջակցութեամբ, առանց երկարաձգելու, խիտն նորա դեղն ու դարմանն գտնել և Ազգային Այլարչութեան վերայ 'ի դուր չը ծանրանալ . մինչդեռ այժմ կը տեսնեմք, որ Այլարչութիւնն փոխանակ ժողովրդի բարոյականութեան և յառաջագիտական կենաց վերայ խորհելու, մարդալինջ միութեանց և պժգալի անբարոյականուէց բարձման վերայ մտածելու, միշտ այնպիսի գործքերով կը զբաղուի, որոնք մի միայն առաջնորդաց յատուկ գործքերն են :

Վերջաւորելով մեր խօսքը՝ կրկին և կրկին անգամ կրօնական և քաղաքական ժողովոց ուշադրութիւնն կը հրաւիրեմք սոյն կետին վերայ, և կը խնդրեմք անտես չառնել այս կենսական խնդիրն. այլ մի առ մի ցուցակագրել, թէ քանի՞ եպիսկոպոսուէք կան ազգին մէջ, ո՞րք ծերութեամբ անձնաբնէս ևն վիճակաւորութեան, ո՞րք արտաքսուած են վիճակաւորութենէ իրենց թերութեանց համար, ո՞րք տակաւին վիճակներն կը խռովեն առաջնորդութեան համար, և ո՞րք քարոզչութիւն մի օգտորուակելով՝ կը խուսեն վիճակաւորութենէ:

Այս ամենն անաշտապէս 'ի հաշիւ առնելով պարտաւոր է անշուշտ Ազգային Վարչութիւնն բոլոր անդործ և անսրաշտօն եպիսկոպոսներն կամ վիճակաւոր կացուցանել, և թէ ձեռքն հաս և արժանաւոր են, և կամ Հայաստանի վանօրէից մէջ ղետեղել, որպէս զի պարագործութենէ յառաջ եկած չարիքներն վերնան Ազգին մէջէն, և եկեղեցականութիւնն ազատի սոյն կըշտամբանքներէն, որոյ ենթակայ է յարժամ:

Մ. Ս. Յ.



«Իշխան մը իւր միակ անմին պատառ խանատունն է. այլ նաեւ, նպատակաց ամեն միոյն » :

Հետեւեալ համառօտ խորհրդաւորութիւնը կրնայ փոքր ինչ այն ամեն անձանց ուշադրութեան արժանի համարուիլ, որոնք մեծ կամ սղօթիկ հոգեւոր կամ մարմնաւոր կառավարութեան մը գլուխ անցած՝ մարդկանց վը-

րայ հակելու ծանր պարտաւորութիւն իրենց վրայ ստանձնած են Աստուծոյ:

Հատ խօսուած և շատ գրքեր յարինուած է իշխանի մը պարտուց և իրաւանց վրայ, ուստի հոս իմ նպատակը այսպիսի ընդարձակ նիւթի մը վրայ ճառել չէ, որ շատ թերթերու կը կարօտի, և ո՞չ ալ իշխանի մը արդարասիրութեան վրայ ընդհանրապէս խօսիլ է միտքս, այլ միայն գրաւոր աննշան կարծուած բայց խիստ կարեւոր կէտ մը կը կամիմ բացատրել, այս սինքն իշխանի մը արդարասիրութիւնը մինչեւ որ աստիճան հասնելու պէտքը ցուցանել:

Իտրեացական և արդարասէր իշխան մը անշուշտ իւր հպատակաց, այսինքն իւր իշխանութեան տակ գրու նուոր մարդկային խօսմբին բարօրութիւնը, յառաջադիմութիւնը և երջանկութիւնը կը կամի բանդի արդարութեան և բարոյական հոււասարութեան պահանջն է այս. Այս կը բաղձայ, կը ճքնի, որ իր օրով սկսի անոնց համար երջանկի և յիշատակաց արժանի թուական մը, որով իւր անունը անմուռաց և կենդանի մնայ նոցա սերնդեան սրտից մէջ, նա իր կողմանէ շատ մը զոհողութիւններ ալ կրնէ սոյն բալձակի նպատակին հասնելու:

() Իննակի համար գիշեր ցերեկ անբուն կը մնայ, կ'աշխատի մարտի և մարմնով, մինչդեռ մարդկային փառաւորութիւնը, կամ աւելի ճիշդ բնէնք ին նասիրութիւնը կը թերադրէր զինքը ձեռքը ունեցած իշխանութեան զօրութիւնն ու սերծութիւնը իւր անձին վրայ կենդրոնացնել: Այս՝ արդարասէր իշխանը՝ ընդ հակառակն շարունակ իր ժողովրդեան կենաց վրայ կը խոհայ, խօսակցութիւնն ու գործքերն ալ բաւական կը հաստատեն որ նորա միակ փափաքը իւր ստորակար-